

ԲԱԺԱՆՈՐՊԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկուրիոյ համար
 Տարեկան 10 Ֆր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՒԻՎ ԱՃԱՐՅԼԻ
 —) —
 Գրութիւնք եւ չիւն տրուիր
 —) —
 Իրանացական տոյք 20 սան-
 դիւն է. երեկեւ տեղի ակ-
 ցակներու համար 20 Օլօ
 գեղջ կըլլայ :

ՇՈՒՐԱԹ

Պատկեր եւ դրամ դրկեր
 Խմբագրութեան հասցեիւն
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՐՇԱՐԹԻ ԵՒ ՇՈՒՐԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. Сукьясовъ.

ԹԱՏՐՈՆ

Ֆաստիւնականի ցաւագին վի-
 ճակը, Ագամեանի, Թրեանցի,
 Սիւսակի եւ այնքան արիւշ հայ
 արուեստագէտներու վարած՝ զըր-
 կանքներով լի կեանքը եւ չքա-
 ւորի մահը, արտուր խոհեր կը
 ներշնչեն ամենուս. որովհետեւ
 այդ ինքնին թաղծագին իրողու-
 թիւններուն մէջ, աւելի թաղ-
 ծագին իրողութիւն մը կը տես-
 նենք. այն է հայկական թատրոնի
 հիմնական չգոյութիւնը :

Եւ սակայն ան՝ գոյութիւն ու-
 նեցած է երեւնի, վայլուն շըր-
 ջան մը տնցուցած է եւ իր պատ-
 մութիւնն ունի : Բայց այժմ մե-
 ռելութեան վիճակի մէջ է. իր
 նախկին զինուորները հետզհետեւ
 ինկած են առանց յաջորդներ
 թողլու. այժմ, հայ թատրո-
 նին յիշատակը միայն մնացած է.
 այն ալ շատ աղօտ կերպով արդի
 սերունդին յիշողութեան մէջ :

Թատրոնի կարեւորութիւնը
 բացատրելու չպիտի ջանամ. բայց
 թէ որքա՞ն կենսական է անիկա
 ազգի մը կեանքին մէջ, կրնաք
 դատել այն կատարութեաննորով
 թուրք կառավարութիւնը հե-
 տամտած է զայն բնաջինջ ընե-
 լու մեր մէջէն :

Կը կարծէ՞ք որ եթէ վստա-
 կար հաստատութիւն մը ըլլար
 թատրոնը, անանկ բան մը որ
 յաճախելով մարդկ թուլամարմ
 մը դառնար, թուրքը չպիտի
 փութար քաջալերել զայն եւ
 բազմացնել իր երկրին ամէն կէ-
 տերուն վրայ . . . :

Բայց ոչ, բռնակալութեան մը
 գործին չգար որ կանգուն մնայ
 այդ դպրոցը՝ այնքան խանդա-
 վառող, այդ վառարանը՝ որ
 հանճարը եւ տաղանդը ձեռք
 ձեռքի տուած՝ այնքան զօրաւոր
 լծակ մը կը յօրինեն ժողովրդեան
 բարձրացումին համար :

Ատոր համար է որ մենք թատ-
 ռոն մը չունինք. եւ մեր գերա-
 սանները անօթի կը մնան, ու եւ-
 թիտասարդութիւնն ալ չհամար-
 ձակիր այդ ապերախ արուեստը
 ընդգրկելու :

Հետեւաբար, Թուրքիոյ մէջ
 հայ հասարակութիւնը բնաւ մաս-
 չունի զործին մէջ. եւ ո՛չ ոք
 կրնայ մեղադրել զայն երբ թա-
 փուր կը թողու այն սրահները,
 ուր թատրք բարբառը կը լսուի,
 օտար հեղինակի մը անհեթեթ
 մէկ խաղը ներկայացնելու հա-
 մար :

Թողունք ուրեմն Թուրքիոյ իր
 բախտին. թատրոնը իրեն ամե-
 նէն յետին պէտքն է : Բայց ար-
 տաստահմանը՝ Ինչո՞ւ հայ թա-
 տրական խումբ մը չունենայ, իր
 մէջ հաւաքելով այնքան ցրտած
 ուժեր, որոնք այսօր հոն հոս
 տարտղնած՝ խեղկատակութեամբ
 կը զբաղին, չգիտելով իրենց տա-
 զանդին վրայ եւ զայն յումպէս
 վատնելով : Խեղճ մասուրեան
 այնքան փորձեր բռնա այս գա-
 զափարը իրագործելու. մարդեց,
 աքնդա, քրտինք թափեց,
 վերջ ի վերջոյ պատրանքի դառն
 պտուղները քաղելու համար :

Հայուն տաղանդը այնքան
 վստահութիւն կը ներշնչէ մեզ,
 որ ապահով ենք թէ բաւա-
 կան է որ հայ թատրոնի վերած-
 ման գործը լուրջ նախաձեռնու-
 թիւն մը գտնէ, շուտ մը երեւ-
 ան պիտի գան այն տաղանդները
 որոնց կորուստին վրայ կողբանք
 այսօր :

Արտա անմանի հայերը պէտք
 է խորհին հայ թատրոն մը կազ-
 մելու եւ զայն արժանաւորապէս
 ապրեցնելու միջոցներուն վրայ :
 Խումբը իր բնութեամբ իսկ ա-
 մենքն ալ գոհացնելու վիճակի
 մէջ կրնայ ըլլալ. եւ այսօր Պուլ-
 կարիս, վաղը Ռումանիա կամ
 Եգիպտոս երթալով, ճամբորդ
 թուլուններու պէս, իր թեւ-
 երուն վրայ պիտի կրէ հայ հան-
 ճարներու արտագրութիւնը,
 հայ բարբառը, անոր անցեալն
 ու ներկայն, յոյզերը, տառա-
 պանքը եւ յոյսերը, ամեն բան
 պատկերացած այդ նեղ բեմին
 վրայ, որ սակայն տիկերքի մը
 չափ բարոյական լայնութիւն
 ունի :

Ազգային այս ճգնաժամին մէջ
 թատրոնի խնդրով կը զբաղեցը-
 նենք մեր էջերը, ապահով ըլ-

լալով թէ այդ խնդրը այնքան
 իրաւունք ունի խորհրդածութեան
 նիւթ դառնալու, որքան դպրոցը
 ուր հայ մանուկը կը դաստիարա-
 կուի : Թատրոնն ալ ազգային ա-
 ռաջգիւծութեան մէջ տարրը եւ
 անոր վերածնութեան մէջ սա-
 տարն է :

ԳԱՐՅԵՐ-ԱՐՇԱԿԻՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 20 Սեպտ.
 Պարսիկ կառավարութեան սխալ
 ուղղութիւնը. — Անճնապատկեր
 թուրքում. — Նոյնը Ռաշտում :

Անոր նախորդ յօդուածում կասկած
 էինք յայտնում, որ պարսիկ կառա-
 վարութիւնը թիւրքի չը կարողանայ
 օգտվել ժողովրդի զէպի հրօնաւոր-
 ները ցոյց տուած ատելութիւնից :
 Դժբախտաբար մեր այս կասկածները
 այժմ իրականանում են. փոխանակ
 ժողովրդի արամագրութիւնից օգտվե-
 լով կրօնականները ուժը կտարելու,
 մի նոր կարգադրութեամբ բոլորովին
 հակառակ ուղղութեան է հետեւում :
 Անպտեհներ ամիս առաջին օրը կէս
 գիշերին, սասանից աւելի պարսիկ վա-
 ճատականներ ձերբակալուած եւ Ար-
 սաբիլի բերդն են աքսորուած . . . :
 Արանք այն վաճառականներն են,
 որ ժողովուրդը ուղղակի մղել են
 կրօնականների զէմ մարտնչի :

Ասում են թէ վալիահոյը (թաղա-
 ժառանգ) ծպտելով մտել է այն ուխ-
 տասեղին, ուր ժողովուրդը գիշերանց
 ապաստանել էր եւ Ալլա՛ն, Ալլա՛ն,
 եւ Ալլ՛, եւ Ալլ՛ բազում. եւ հէնց
 այնտեղ էր ճանաչել այդ պարագրու-
 ներին . . . :

Անցեալ ամիս վերջին օրը քաղա-
 քումս պատահեց անճնապատկեր
 մի դէպք :

Մի հայ երիտասարդ զէպից մի
 օր անաջ պատկերում է մի ազնկայ
 վրա, հետեւեալ օր անագասայց
 զուրս գալով, անճնաստան է լինում
 ատրճանակով . . . : Տեսցիք զէնքի
 պայթումից սենեակ են վազում եւ
 խեղճ երիտասարդին մեռած գտնում :
 Հարսանիքի սուէրը սուգի տան է
 փոխվում :

Անճնասպանութեան պատճառը տե-
 ղուածս արդ մի խայտառակ սովոր-
 ութեան են վերագրում : Առագաս-
 աի սենեակին կից մի սենեակում, եւ
 երբեմն էլ նոյնիսկ առագաստում,
 նոր հարս ու փեսի մօտ, ազնկա
 ծնողի կողմից մի կին են փակում,
 որը պարտաւոր է հետեւեալ օր խայ-

տառակ կերպով ցոյց տալ հանդիսա-
 կաններին հարս ու փեսի ծնող-
 ներին հիմնական ծածկոցը . . . :

Ինչպէս երեւում է, երիտասարդը
 նոյն գիշերը ունեցել է մի անժամա-
 նակեայ սկարտիթին, որը յա-
 ճախ է պատահում. լիսի պահպան
 կինը երիտասարդի այս վիճակը նկատ-
 տելով, նրան վա՛յ է կարգում եւ վի-
 բաւորում : Տկարամիտ երիտասարդը
 արդէն չափազանց յուզված՝ այս վի-
 բաւորանքից աւելի զրգոյում, այդ
 ծայրայեղ կրքի խորին ազդեցու-
 թեան տակ որոշում է անճնասպան
 լինել . . . :

Արանից համարեայ երկու ամիս
 առաջ մի հայ երիտասարդ Ռաշտում
 նշանված է լինում մի ազնկայ հետ
 եւ հէնց հարսանիքի գիշերը, պսակ-
 վելուց մի քանի րոպէ առաջ, անճ-
 նասպան է լինում :

Անճնասպանութեան շարժառիթը
 երիտասարդի գործերի անյաջողու-
 թեան են վերագրում. խոկական
 պատճառը անյայտ է :

Անճնասպանութիւնը Պարսկաստա-
 նում բաւական տարօրինակ մի նոր
 երեւոյթ է, պատճառը չէ կարելի վե-
 րածրել քաղաքակրթութեան տա-
 րածման, այլ աւելի ագիտութեան . . . :

ՄԻՐՋԱ.

ՊՈԼՍՈՑ ԿԵԱՆՔԸ

Սուլթանին հիւրերը մեկնեցան
 անցեալ շաբաթ իրիկուն եւ Իշ. օր
 Հայֆա ժամանեցին, իրենց հետ տա-
 նելով քաղցր յիշատակ մը եւ . . .
 այն թանկագին ընծայները զորս ա-
 րեւելեան չափազանցուած հիւրասփ-
 րութիւն մը շոյակցեց իրենց :

Մեկնումը այնքան հանդիսաւոր
 եղաւ որքան եղած էր ընդունելու-
 թիւնը : Նոյն թափօրն էր որ այս
 անգամ հակառակ ուղղութեամբ Եր-
 տրդէն Տօլմա-Պահէէ իջաւ :

Դարձեալ ճաշ, նորէն բարեկամա-
 կան զեղուիներ, եւ նուէրներու փո-
 խանակում : Իրաւ է որ Վիլհէլմին ալ
 վար չմնաց. եւ նոյնքան . . . լուսա-
 նկար նուիրեց որքան որ աղաման-
 դազարդ մեծաբժէք իրեր ընդունած
 էր : Հոկնճոլէնեան այս վախա առա-
 տաձեռնութիւնը սա կերպով կրնայ
 բացատրուել, որ մինչդեռ օսմ. վե-
 հապեա մը իր սիրելի հայտաւկներուն
 արեւը քամելով իր արկղները լե-
 ցնելու ազատ է, եւ ո՛չ ոք իրաւունք
 չունի հաշիւ պահանջելու, Գերմա-
 նիոյ կայսր մը զուրկ է այդ սան-
 ձարձակ կեղեքումը զորձագրելու ա-
 ղանճնաշնորհումն եւ ստիպուած է

հիւստական որոշ շրջանակի մը մէջ պարփակուել :

Սուլթանը իր հիւրերը շոգենաւ գետեղելէ ետքը պալատ դարձաւ , եւ սփոփանքի ուճ մը արձակելով իր մենակեացի կեանքը ձեռք առաւ :

Գուցէ առիթն է այս տեղ , քանի մը տեղեկութիւններ տալու Սուլթանի առօրեայ կեանքի վրայ , օգտուելով երիտասարդ թուրքերու պատկանող պալատականի մը նոր-Դարի թղթակցին տուած ծանօթութիւններէն :

Անտանիքի պարզապէս այդ կեանքը : Ուշ կը պառկի , կանուխ կարթընայ : Իր առաւօտեան սենեկազգեստն է մուր գոյնով շրջագոստ մը տաճկական ուտէնկոտով : Ժամը Տին իրեն կը բերեն նախաճաշիկը որ փորձանք մըն է պարզապէս . եւ կը բաղկանայ կարագէ , հաւկիթէ եւ Սոքքաի Եէրիֆէն զրկուած սուրճէ : Ատկէց ետքն է որ իրեն կը ներկայացուին օրական տեղեկագրերը , ծնրագիր պաշտօնեաներու ձեռքով : Վերջէն Սուլթանը ըստան կը կարգայ . Գազիէն ար Մոնթէրէն իր նախասիրած հեղինակներէն մէկն է . օտար լեզուներու մասին շատ տարրական են գիտցածները :

Ժամը 11 1/2 ի ճաշը կը բաղկանայ տաճկական չորպակ մը խիստ թանձր եւ սննդարար նիւթերով շինուած , որուն կը յաջորդեն 12 տեսակ համազաններ , որոնց համը առաջին անգամ «չէնիճի պաշին» կը նայի , ապա ցուցանելու համար թէ ուտելիքները թունաւորուած չեն : Իրիկուան ճաշը դարձեալ նոյնքան պնակէ կը բաղկանայ :

Հազիւ երբեմն , ժամը կին , ձիով կամ կառքով պտոյտ կընէ պալատան ընդարձակ պարտէզներուն մէջ , եւ այն ատեն է որ կայցելէ իր հարիւրաւոր հարէմներէն մէկուն զգեակը : Արհեստական լճին եզերքն է իր զուարճութեան միակ վայրը , ուր միշտ պատրաստ են ելեքորական նաւակներ :

Սուլթանը առանձնանալու համար ունի անթիւ սենեկներ , որոնք զազանի կապակցութիւններ ունին բուն պալատին հետ : Մարդ չէ կարող որոշ գիտնալ թէ ուր պիտի անցնէ

իր կասկածելի ցերեկը եւ խոսովայոյզ գիշերը : Գիշերները իր նախգլուշութիւնները կը կրկնապատկուեն : Դռները ծանր երկաթեայ են եւ կը կղզուին գազանի փակաւքներով . սենեակներուն մէջ , սանդուխներու , զոններու եւ պատերու վրայ , գազանի որոգայթներ կան , կամ ազմկայոյզ ելեքորական կոճակներ , որոնք իրարու հետ կապակցութիւն ունին եւ իսկոյն գաւաղիւրը կը մատնեն . անոնց զազանիքը միայն Սուլթանը զիտէ : Եւ այսչափ զգուշութիւններէ ետքը , զոյգ մը անազին շուներ կը հսկեն դրան առջեւ եւ ասոնց աւելի կը վստահի , քան իր ամենէն հաւատարիմ պաշտօնեային :

Շ Ո Վ Ի Ն Ի Չ Ս

Իրաւունքի 79 թիւին մէջ անխառն , անգիտակց հայհոյանք մը ուղղուած էր Պատրիարքարանի երկու վաղեմի աշխատաւորներուն՝ Բարթոլ թեւեանի եւ Կարապետ ինչպատուրեանի դէմ , անոնց մէջմէկ պատուանշան ստանալուն առթիւ , վերջերս : Այդ մէկ երկու կեղտոտ սողերն ամօթալի շողիկիզիլ ամենէն ակտիւ արտայայտութիւններն են : Այն խմբագիրը որ իր զազիր ու ճղճիմ բողոքներն մէջէն «գաւաճան» բառը դոց աչքով կառնէ ու ազգային երկու անկեղծ , սիրտցաւ ու վաստակալից պաշտօնեաներուն ճակտին կը փակցունէ այսպէս , ամենէն առաջ ցոյց տուած կըլլայ իր բացարձակ տգիտութիւնը այդ մարդիկը ճանչնալու մէջ , եւ յետոյ իր ծիծաղելի փութկոտութիւնը աստեղ առթիւ մը օգտուելով իր լրագրին մէջ ազգասիրութիւն ծախելու : Լղրճուի բան :

Այս սողերը գրողը բոլոր ուժովը կը բողոքէ յիշեալ «գաւաճան» բառին դէմ , շատ մօտէն ճանչցած ըլլալով Բարթոլ թեւեանի եւ Կարապետ ինչպատուրեանի ամբասիր , անստղիւտ են անխարդախ պաշտօնավարութիւնը ազգ. վարչութեան մէջ իր 30 տարիէ ի վեր : Պատրիարքարանի մոթ սարտարութիւն մէջ անոնք եղած են միակ լուսաւոր ու միախառնական տարրերը , եւ բոլոր այն փոթորիկներուն մէջ որոնք մըր-

կեցին Պոլսի մթնոլորտը 90էն մինչեւ 96 , այս երկու պաշտօնեաներուն ընթացքն անքննադատելի եւ ֆոռիֆո եղած է լոկ : Եւ ահա խելախել մը կելլայ գաւաճան բառով կը վարձատրէ զանոնք : Մեղք մեղի եւ մանաւանդ , մեղք հայ լրագրութեան :

Շաւարշ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԵՇԱՍԱԿՆԵՐ

—) —

Իրիկուան ժամ 6ին կը մտանաւար , մենք չորս բարեկամներս կը կարենք Մապուկորու թաղի հայոց տները շարքն , եւ կանցնինք Բամալկանց արտերն : Եղանակի յանկուցիչ ազդեցութեան տակ ենք : Վանայ կապուած ժողի յուշուած ալիքները վրայէն մաղուելով կը սուրայ հայրենիքի տնուշ քամին՝ որ Վարագէն , Սիրահէն ու Գրգուէն հազարաւոր ծաղկանց զմայլեցուցիչ բուրումները կը սփռէ շուրջանակի : Լեռները ու հովիտները զգեցած կանոնչին հետ բարաւոր աղբիւրները ու առուակները կարկաչունք գիտես ուր եզեմն իր ամբողջութեամբ կը պատկերացնէին՝ ու մենք ամենքս հայրենիքի հողին վրայ , իրական այդ պատկերէն արբելու՝ հոգեկան չեմ գիտեր որպիսի՝ տպաւորութեան տակ թեւ առած կը թռչէինք , ու միանալու կերպէնք «Իրաւունք Հայաստանի զայ ծաղկապսակ , զայն ողջունելու ելէք հայ որդեակ» երգը՝ ուրիշ շատ մը երգերի հետ : Կը քալենք , կը շնչենք , ու բնութեան սրբութեանէն զինովացած ենք : Սմէն վայրկեան հայրենիքն իր անցեալ ահաղին պատմական տեսակէտով վիթխարի գրքի մը պէս առջնինս պարզուած՝ իր բոլոր մեծութիւնն ու կրած անցքերու շարքերը գիտակցօրէն ու գործնա-

պէս կը զգացնէ մեզ : Կը զգաս որ դուն իրօք սիրտ ու արիւն ունիս , ու կը մտածես որ , այն հողը , այն դրախտի գետինը որ ին վրայ կը կոխես ու որուն գեղեցկութեանէն կը հմայուիս , աւա՛ղ անարժան թուրքին ու վայրենի քիւրտին սեփհակաւութիւնն դարձած է . եւ դուն քու հողիդ ու հայրենիքիդ մէջ անմաս ու անբաժին ես , անժառանգ ստրուկ ես . . . : Ու սիրտդ որ արդէն արիւնոտած է , կը սկսի փղձկիլ իրական այդ հակապատկերին հանդէպ : Դառնութիւնը որ կուզայ տակաւ ճմել մեր օրը տերը՝ Մապուկորու Ս. Կարապետ վանքի աւերակ տաճարին ու անբնակ հայ գիւղին հանդէպ ալ աւելի բազմապատկուելով՝ այդ աւեր գեղի ու կործանուած վանքի գիմաց քարայած՝ հիասթափ ու անխօս կը գիտենք . . . :

Բաղէչ քաղքէն գրէթէ մէկ ժամ հեռու է Մապուկոր աւերակ հայ գիւղն ու Ս. Կարապետ անուն վանքը : Անգամ մը եթէ լուր մտածէ մէկը՝ ու քիչ մը գիտութեան առնէ սա իրողութիւնը թէ այսպիսի անթիւ ու անհամար աւերակ հայ գիւղեր ու տաճարներ կան , մարդս ամենաարագը զայրութեամբ ու ատելութեամբ կը լեցուի անսիրտ թուրք կառավարութեան գոթախային կազմակերպութեան վերաբերմամբ : Բանի որ այսպիսի նշանաւոր նահանգաքաղաքի մը ամենամօտիկ արուարձան եղող գիւղերն ու վանքերն իսկ , իր կամայականութեան պզգալի ուղղութեամբ , յեղափոխութիւնն ծագելէն շատ յառաջ , աւեր ու անբնակ կը դառնային , քանի որ քիւրտ աւերիչ տարրը՝ օրը օրին իր գաղտնութեանց մէջ կը քաջալերուէր , եւ սուլթանական հայալիկ ծրագիրը գործադրուելու քաղա-

Վ Ա Ր Գ Պ Ա Տ Ր Ի Կ Ո Վ Ի Յ Ե Շ Ա Ս Ա Կ Ա Ր Ա Ն Ը (43)

Այդ օրն էլ վերաւորված դատաւորները դատը ընդհատեցին եւ մեզ բանա քշեցին : Նորից մի քանի շաբաթ դատը ետ ընկաւ : Բանտում չափազանց ծանձրանում էի : Շարունակ տեղեկութիւններ էի հարցնում Արփիարի , Դատեանների եւ բժիշկ թիրեաքեանի մասին : Նրանց էլ պէտք է դատի ենթարկէին : Արփիարի եւ Մարիմեանի ենթարկվելը ինձ շատ հասկանալի էր , որովհետեւ մէջ տեղը կար Մարիմեանի նամակը , իր բացարձակ յայտարարութիւնը որ նամակը իրանը է , ինքը յեղափոխական է եւ Արփիարն էլ իրան հետ տեսակցութիւն է ունեցել Տրապիզոնում : Բայց ինչու էին մնում Դատեանները եւ բժիշկ թիրեաքեանը , այդպիսի ազդեցիկ զիբը ունեցող մարդիկ : Դատեանների մեղքը միայն փոքրիկ Արմենակի մօտ գտնուած դաշտնը էր . Արմենակը ինքը յայտնակ էր որ այդ դաշտնը Դատեանների տանից վերցրել էր գազանի կերպով : Բոլոր ձեռքակալվածների մէջ այդ երեքին ո՛չ մատնող կար , ոչ էլ ճանաչող : Մի խօսքով , դրանց

դատապարտելու կամ ձերբակալելու փաստ չը կար մէջ տեղ . այդ մարդոց մասին ինձ ոչ մի հարց չուրի , այն ինչ բոլոր ձերբակալվածների մասին հարցնում էին : Մատնութիւն կար . մատնութիւն որի աղբիւրը Նազիմը թագաւում էր . պահում էր իր հեռուոր նպատակներին հասնելու համար : Պարզ էր որ մատնութիւնը ազդեցիկ , հաւատ ներշնչող , վստահելի աղբիւրից էր , եթէ ոչ Դատեանների պէս մարդիկը եւ բժիշկ թիրեաքեանը այնքան երկար չէին կարող բանտում մնալ . մատնութիւնը այնպիսի մարդու կողմից էր որ նրանց հետ յարաբերութիւն էր ունեցել . նրանց զրացմունքների եւ ձգտումների հետ ծանօթ գոնէ մասամբ : Բայց ո՞վ էր . ահա՛ սարսափելի մեծ հարցականը , անլուծելի հանելուկը ինձ եւ բոլորի համար . գոնէ այն ժամանակ :

Մտածում էի , գլուխ ջարդում էի այդ մատնութեան աղբիւրը գտնել , բայց անկարելի էր : Ձէի գտնում , չէի հասկանում : Ինձ լուրեր բերող ոտակաւներն էլ ոչինչ չէին ասում այդ մասին . նրանցից ստացած տեղեկութիւններս , որոնք երբեմն գուրս էի քաշում խորամանկութեամբ՝ միա-

միտ հարցեր տալով նրանց , երբեմն էլ սուտ քնած ձեւանալով լսում էի պահապանների իրար մէջ եղած խօսակցութիւնները , որ իրար նորութիւններ էին հարցրում օրվան զէպքերի եւ ձերբակալվածների մասին , երբեմն գաղտնազող հայեացքներ զննելով ինձ վրա՝ համոզվելու արդեօք իրական քնած եմ եւ չեմ լսում իրանց գազանի խօսակցութիւնը . բոլորն էլ ձիջող դուրս եկան : Բայց այդ երեք ձերբակալվածների մասին ոչինչ չը կարողացայ լսել : Ինչպէս վերը ասացի , Նազիմը այդ գազանիքը միայն իրան էր պահել . . . : Շատ ձանձրանալուց , երբեմն էլ ուղղակի Նազիմից մի քանի հասկանալու համար , երբեմն մի սուտ պատճառով գնում էի նրա մօտ : Մի անգամ էլ գնացի թոյլտուութիւն խնդրելու որ բաղնիք գնամ :

Նազիմը ինձ ընդունում էր շատ սիրով . միշտ սուրճ եւ սիկատիթներ էր առաջարկում . իրան ետեւերին հրամայում էր լուցկի վտակել . խորամանկութիւնով եւ սիրաշահելով ինձնից ուզում էր տեղեկութիւն քաղել . յանկարծ այս եւ այն ձերբակալված մարդու անունն էր տալիս ինձ , որ յանկարծակի բերելով իմանայ թէ

արդեօք ճանաչում էի թէ ոչ . բայց ոչ մի անգամ բժիշկ թիրեաքեանի եւ Դատեանների անունը չը տեսց , զարմանում էի : Ես էլ չէի տալիս , որովհետեւ մէկ վախենում էի թէ նրանց վիճակը աւելի կը ծանրացնեմ , մէկ էլ , չէի ուզում որ նա իմանայ թէ ես ոտակաւաւորում մէջ անցած դարձածի մասին տեղեկութիւններ եմ ստանում : Երկուսով իրար հետ խաղում էինք : Վերջապէս երկար յետաձգումից յետոյ՝ Գնդի շաբաթ օրը , մեզ կրկին երկիւթեան ժամը չորսին կարծեմ , դատարան : Դեռ դատը չը սկսած , պալատից էր թէ որտեղից , հրաման եկաւ որ մեզնից մի քանիսին ուղարկեն Պատրիարքի մօտ , Սուլթանի ներքի է : Այդ օրը կարծեմ ազատվեցին բողոքական Մկրտիչը , չէմ յիշէի : Բաղդասարը , եւ եթէ չեմ սխալվում Արմենակը : Դատը կրկին ընդհատվեց , մենք նորից բանա վերադարձանք : Բուսական մարդ էր ներկայանալով էին եւ թիրեաքեան ու Դատեանները : Սրանց էլ միւսներին հետ ասարի էին Մայր եկեղեցին «հրաժարմբ» ասելու եւ երկվելու Սուլթանին հաւատարիմ լինելի :

(Շարունակելի)

քականութիւնը կը զօրանար, ապա ուրեմն մեր ազգային յեղափոխութիւնն այդ ամենի ծնունդ եղող անխուսափելի պէտքն էր: Եւ արդարեւ ժամանակի ընթացքին ու դէպքերի ազդեցութեանց հետ աճելով, իր յայտնի պոռթկումը դուրս տուաւ, ամեն հայի սիրան ու միտքը մի և նոյն Ս. նպատակին կապելով: Սրբացած ու բարձրացած ազգային յեղափոխութիւնը մեր բոլոր յոյսերի ու ցանկութիւնների միակ յեղափոխութիւնն է, այդ Ս. ճանապարհն է որ, որ մըն ալ մեզ պիտի տանի հասցնէ գրախտի այն աննման բնագաւառը, որուն բերաւոր յիշատակների հետ հազարաւոր մարտիրոս նահատակների Ս. արիւնը մեր վրայ պարփ կը դնեն ամենայն ինքնամոլութեամբ ու անձնազոհութեամբ այդ Ս. ուղիէն ընթանալու, և այս գիւղի ու վանքի նման հազարաւոր աւերակ հայ գիւղերն ու Ս. տաճարները վերաշինելու:

Ծայրագործ Ս. կարագետի աւերակ վանքի արեւելակողմը, ժայռոտ լեռան մը ստորոտէն յորդառատ պաղ աղբիւրմը կը բխի, Ծայրագործ աղ անունով: Այս առատահոտ աղբիւրի ջրի կէտը առաձիգն առուով մը միեւնոյն սեղէն զատուելով, Բաղէշի Ծայրագործ թաղի արտերուն, պարտէզներուն ու բնակչաց ջուր կը բաշխէ. իսկ միւս կէտը, փոքրիկ գետակ մը ձեւացնելով, դէպի արեւմուտ անընդհատ կարկաչումով մը սրբնթաց կանցնի այն քարակիր կամուրջի տակէն, որ ճիշտ Ծայրագործ ձորու վըրայ Պոռ գիւղ գնալից ճանապարհի ուղղութեան կապուած է. ու 5-10 վայրկեան ալ միեւնոյն ուղղութեամբ շարունակելով իր շունդալից գնացքը, Պիթլիսի հիւսիսակողմը թաղի գլուխի արտերէն վար Տիգրիսի աջ ափին կը միանայ, և ապա դէպի հարաւ ուղղակի Բաղէշի քաղաքի գլխաւոր կեդրոններէն ոլոր մտոր դառնալով, կերթայ միանալ միւս երեք գետակների հետ՝ որոնք իրենց կարգին պիտի յիշուին:

Ծայրագործ կամուրջը կանցնելիք, մեր բոլոր մտանցմանց ու խոկմանց մէջ գրէթէ խելայեղ, կերթանք կը հասնինք Պոռոց ջուրը՝ որ նոյն գիւղի բերաւոր աղբիւրներէն ու սկիներէն կազմուած գետակ մըն է, Տիգրիսի փոքրիկ վտակ մը: Օրը տարածամած էր, ու մայիսի պայծառ արեւ իր յետին ճառագայթները ամփոփած և Ալնուածորի ու Բահվայի կանանչազգեաց սարերի գեղեցկութիւնն ու գաշտերի շքեղանալով իր վայրէջնելով, ամէն սեղ կեանք ու կենդանութիւն կը սփռէր: Աւ մենք այդ ամէն իրական նկարներով շրջապատուած՝ չեմ յիշեր թէ ի՞նչ տպաւորութեամբ անցանք Պոռոց գիւղի կեդրոնէն: Մշակուած ու կանանչ

արտերի մէջի ճանապարհով մը գնացինք տաան վայրկեան դէպի հիւսիս Անդոց լեռների ստորոտը՝ պուրակների ու ծառերի կանանչներով վարագուրուած Պոռայ նարեկացիի վանքը:

ՆԱՀԱ-ՊԵՏ

(Շարունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

—Մարդուանցի քանի մը հայ աղաներ, տեսնելով թէ հրապարակին վրայ տնտեսական տագնապ կայ, Ամասիոյ Ս. Աստուածածին վանքին տարեկան հազար ոսկիէ աւելի հասոյթները իրենց շահու աղբիւրը բեր են: Միտարանները վանքէն հեռանալով, այս անխիղճ աղաներուն դէմ բողոքներ են Պատրիարքարանին:

—Սուրէ Պլաքի օրինակը իրեն հետեւող մըն ալ ունեցեր է: Այս անգամ Անժել անուն քառանկայ հրէուհի մըն է որ Պատրիարքարան խնդրագիր տուեր է հայ դառնալու փափագ յայտնելով: Մօտերս պիտի մկրտուի:

—Տօքթ. Աղէք. Աղաբէկեանց որ ժընէփի բժշկական համալսարանէն վկայուած է և երկու տարիէ ի վեր Թրոյանի դաւառին կառավարական բժիշկի պաշտօնը կը վարէր, Վառնա հասած է, և հոս պիտի հաստատուի:

—Այնթապի մէջ մանկանոց մը բացուել է, ուր այժմ 40 ի չափ աղաք կը պատասխարուին:

—Մաշտոց վարդապետին մեկնելէն ետքը, Աստըրի հայոց եկեղեցին գոցուել է, որովհետև հոգաբարձութիւնը չէ կրցեր... սակարկութիւնը յարմարցնել Տ. վարդան քահանային հետ, որ իր հոգեւոր պաշտօնը կատարելու համար, շաբաթական 8 տուլար պահանջեր է:

—Տիգրանակերտէն կը գրեն թէ ոստիկանները ձերբակալել են Գաս Նամէ անուն ասորի քահանան որ Մակարայեցոց վանքէն ութուսն կտորի չափ ոսկեղէն, արծաթեղէն խաչեր, եկեղեցական անօթներ, զգեստներ և այլն կը փախցնէր ջրերի մը վրայ բեռնուցած և վրան յարգ լեցուցած: Գողոններու մէջ կը գտնուի եղբր նաեւ Թագէոս առաքելային ալ բազուկը:

Քայսնի է թէ այդ ասորի գողերը միտքերնին դրած են Մակարայեցոց պատմական վանքին տղանալ. և որովհետև փաստ մը չունին, հետամուտ են վանքին մէջը եւ շուրջը գտնուած հայկական բոլոր յիշատակարանները եւ արձանագրութիւնները ջնջել: Թուրքիոյ մէջ ամէն բան կարելի է:

—Պագուի հարուստ հայերը 15,000 բուպիլի նուիրեր են Աստուրիսանի ռուսագաւան եկեղեցիին կառուցման:

—Սեպտ. 26 ին Գէորգեան ճեմարանը տօներ է իր հաստատման 24րդ տարեդարձը: Տեսչի տեղեկագրէն կիմացուի թէ 1897-88 ռուսմական տարւոյ մէջ ճեմարանը ունեցեր է 216 աշակերտ, որոնց 183ը դիշերթիկ և 33ը ցերեկեայ: Ասուցիչներու թիւը եղած է 13:

Բացի ուսեւստի ծախքերէն, որոնք ամբողջապէս Մայր-Աթոռի կողմէ հոգացուած են, ճեմարանը նոյն տարուան ընթացքին մէջ ծախսած է 39 հազար բուպիլի, ուսուցիչներու ռոճիկին, և աշակերտներու հագուստեղէններուն համար:

—Կրօնական ժողովը որոշեց Հմանակ եպիսկոպոսը քննիչ կարգելով, Եսայաքոնէրէ, Էշմէ և Գուրապէէն զրկել, այդ կողմերու կրօնափոխական շարժումներու առաջը առնելու համար:

—Եգիպտական թերթերէն կը տեղեկացուի թէ Նուպար փաշան զարձեալ հիւանդացի է ծանր կերպով:

—Ստոյգ աղբիւրէ կիմանանք թէ Եւրոպայեան օտարական մը տեղեկագիր մը զրկելով Պոլսոյ պալատան, ծանուցեր է թէ իր ստացած տեղեկութիւններուն համեմատ, իբր թէ հայ յեղափոխական կոմիտէները կը պատրաստուին եղբր պատուիրակութիւն զրկել Երուսաղէմ, Վիլնէյլ կայսեր ներկայանալու և անոր միջամտութիւնը խնդրելու Սուլթանի մօտ, հայոց կացութիւնը բարելաւելու համար:

Թ Ա Տ Ր Ո Ն

Այս իրիկուն է որ տեղի պիտի ունենայ, Սաէտինէնի սրահին մէջ, թատերական ներկայացում մը ի նպաստ գերասանապետ Թատուլեանի, որ այս պահուս ծանր կերպով հիւանդ պառկած է հեռաւոր հիւանդանոցի մը անկիւնը:

Ներկայացուելիք խաչն է ՍԱՆՏՈՒՅՏ սրտաշարժ ողբերգութիւնը:

Ապահով ենք թէ Վառնայի հասարակութիւնը պիտի փութայ արգիւնաւորել այս ձեռնարկը, փրկելու համար կեանքը տաղանդաւոր գերասանի մը, որ երկար տարիներ հայ բէմին ամենէն փայլուն աստղերէն մէկը եղած է:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐՐՈՐԴ ԹԱՂ, ԹԻՒ 66

Պարսկական հիւպատոսարանին դիմաց

Այս հաստատութիւնը որ տարիէ մը ի վեր գիրքեր կը մատակարարէ ընթերցասէրներու, նոր գիրքերով ճոխացած կը շարունակէ բաց մնալ ամէն Գշ. եւ կիրակի ժամը 1—5. իսկ Եշ. կէս օրէ ետքը միմիայն կանանց համար:

—)(—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Յ Ր Ա Ն Ս Ա

Պրիսոնի նախարարութիւնը տապալեցաւ, նոր բացուած Քրեանսական խորհրդարանին առաջին նիստին մէջ:

Նախագահ Պ. Տէշանէլ ատեանը բանալուն պէս, Պ. Տէրուլէտ բէմը կելլէ պարզելու իր հարցապնդումը Տրէյֆիւսի խնդրին վրայ: Բուն յարձակում մը կընէ Պ. Պրիսոնի Գահլիճին դէմ, որ նըպաստաւոր ընդունելութիւն մը ըրած էր դատին վերաքննութեան: Տէրուլէտ բացատրութիւն կը պահանջէ պատերազմական նախարարէն, որ զորձակից եղած էր Գահլիճին: Այն ատեն զօրավար Շանուան բէմը կելլելով կը յայտարարէ թէ ինք բանակին պատիւը պահպանելու համար է որ ընդունած է նախարարութեան պաշտօնը, և թէ ինք միշտ համափառ գանուած է Քալէնեաքի և Աիւրլէնտէն զօրավարին, և թէ այսօր նախամեծար կը համարի հրաժարիլ:

Պ. Պրիսոն այս յանկարծական և ապօրէն հրաժարումէն շուտաւ կառաջարկէ նիստը ընդհատել, Շանուանի հրաժարումը Հանրապետութեան նախագահին հաղորդելու համար: Երբոր նիստը կը վերաբացուի, Պ. Պրիսոն կը յայտարարէ թէ պատ. նախարարին հրաժարականը ընդունուած է: Պ. Պատրի Տ'Ասօն կը զանդատի կառավարութեանէն որ թոյլ կուտայ որ բանակը անարգուի Պ. սը Մահի կը հրաւիրէ կառավարութիւնը վերջ գնել բանակին դէմ մղուած պայքարին: Յետոյ ընկերվարական Պ. Պէրթոյ, կառաջարկէ վտահոթեան քուէ տալ կառավարութեան. բայց ժողովը 254 ի դէմ 286 ձայնով կը մերժէ այդ առաջարկը: Ասոր վրայ նախարարները կը հրաժարին և ատեանը կը փակուի: Յաջորդ նիստը նոյեմբեր 4ին: Այս նիստը Քրեանսական խորհրդարանին ամենէն փոթորկալից նիստերէն մէկը եղած է, և հային շփոթութիւններ և ժխոր առաջ բերելով թէ խորհրդարանի սրահին մէջ և թէ մանաւանդ դուրսը փողոցներուն մէջ:

Հետաքրքրական է անշուշտ գիտնալ թէ ինչ կընէ Տրէյֆիւս իր Սատանաի կղզին, մինչ ասոգին այնքան ազմուկ կը բարձրանայ իր անուան շուրջը: Իր պահապաններէն մէկը որ Եւրոպայ դարձած է, կը պատմէ թէ Տրէյֆիւսի մորուքը եւ մազերը ճեփ ճեփուկ եղած են, կորաքամակ ճեփուկ մը դարձած է ու ծանր ծանր կը քալէ առանց բաւ մը արտաբերելու: Իր խրճիթը կղզիին մէջ տեղ չիտուած և ներսէն հայլիներով ծեփուած է դիւրացնելու համար այն ծայրայեղ հսկողութիւնը որ կը գործադրուի իր վրայ:

ՎԻՃԻՆԱԻ ՄԷՂ

Այս պահուս միտքերը շատ աւելի զբաղած են ժամատարող քան Հունգարիոյ հետ պետական պայմանագիրը կնքելու կամ չը կնքելու խնդրով :

Տօքթ. Միւլլէր մեռած է, զոր էր պարտականութեան : Վեհապետները կը պատրաստուին այս գիտնականին արձանը կանգնելու : Նոյնպէս մեռած է Պարիշ սպասաւորը որ առաջինն վարակուած էր ահաբեկի ախտէն : Միւս երկու երեք հիւանդները աւելի կամ նուազ ծանր վիճակներ ունին : Առողջապահական վարչութիւնը գերմարդկային ճիգեր թափած է վտանգին առաջը առնելու : Աշխատանքին բոլոր սպանները կրակի տրուած են : Կրնաք վստահ ըլլալ թէ իրական վտանգ մը չսպառնար Եւրոպայի : Կոմս Թուն խորհրդարանին մէջ յայտարարած է թէ կառավարութիւնը բնաւ ճշմարտութիւնը չը պիտի պահէ հասարակութեան :

Ֆ Ա Շ Օ Տ Ա

Պետական անձերը անվերջ ճառեր կը խօսին, թերթերը անհուն յօդուածներ կը գրեն և սակայն տակաւին լուծման մը չեն կրնար յանգեցնել : Անգլիոյ և Ֆրանսայի միջեւ առկա մնացած այս ժաշտաբի խնդիրը : Անգլիական թերթ մը կըսէ թէ արդարեւ անհեթեթ քան մը պիտի ըլլայ եթէ երկու քաղաքակիրթ երկիրները ժաշտաբի ճահիճներուն համար իրարու գրուի պատուեն :

Անգլիան բնու տեղի չպիտի տայ, և իր պետական անձերը ու մամուլին լուրջ մասը կը պնդեն որ, եթէ Ֆրանսա որոշէ ետ քաշուիլ, բնաւ իրեն համար նուաստացուցիչ նահանջ մը ըրած չպիտի ըլլայ, քանի որ Մարշան, Ֆրանսական կառավարութեան կողմէ զրկուած աշխարհակալ մը չէ, այլ պարզ երկրախոյզ մը :

Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը Անգլիոյ կառավարութեան մէկ հարցումին հետեւեալ կերպով պատասխանեց է .

«Նեղոսի վրայ կայան մը կուզենք, Ուպանկիի մեր ստացուածքներուն համար» :

Անգլիական թերթերը օրինաւոր կը գտնեն Ֆրանսայի այս համեստ փափագը, որուն իրազօրծումը խնդիրը պիտի փակէ, երկու կողմերու համար ալ պատուաստուող կերպով :

ԻՍՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Կոմս Մուրափիէզ որ Բարիզէն Վիէննա գացած էր, Քրանց եօղէֆ կայսեր ու նախարարապետ կոմս Կուլտիսովիչի հետ երկար տեսակցութիւններ ունենայէ ետքը, Լիվաթիա մեկնած է, ուր կը գտնուի նաեւ Չարը :

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը սքանչելի ապուրուածեան մը տակ կը մեկնի, որովհետեւ կատարեալ համերաշխութիւն մը գտած է Ռուսիոյ և Աւստրիական զորքի միջեւ Պալգաներու քաղաքական խնդիրներուն նկատմամբ :

Երկու նախարարները իրենց տեսակցութեան առարկայ ըրած են նաեւ զէնքակցութեանց եւ արեւելեան խնդիրները, և ի մասնաւորի Եօրկիոս իշխանին Կրէտէի կառավարիչ անուանուելուն խնդիրը :

Չէնընկէցութեան համաժողովը պիտի գումարուի յունվար 20 ին Ռէթէրսպուրի մէջ :

Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը, Պաշտաբի խնդրին գեղին զրքէն զատ՝ հրապարակ հանած է նաեւ ուրիշ գեղին գիրք մը կրէտական ինքնօրինութեան հարցին վրայ : Այս վերջին գիրքը 266 տողիւ մաններ կը պարունակեն :

Վիլհէլմ կայսրը Պոլիս գլուխուած ատեն, օտար գետնաներէն անմիջապէս ետքը իր ներկայութեանը ընդունեց է պապական նուիրակ Պօնէթին : Այս տեսակցութիւնը նշան մը կը համարուի թէ Գերման կայսրը փափագող է Վատիկանի հետ բարելուել իր յարաբերութիւնները որոնք բաւական ձգտուած էին Արեւելքի քրիստոնէից պաշտպանութեան խնդրին առթիւ պապին խօսած ֆրանսասէր ճառէն ի վեր :

Պոլիարական Սօպրանիէն բացուեցաւ ամսոյս 15 ին :

Լորա Ռոզպէրի Բէթաթի մէջ բանտխօսութիւն մը արտասանելով, կարծիք յայտնեց է թէ Չարի առաջարկը իրական արդիւնք մը չպիտի ունենայ, եթէ գործնական հիման մը վրայ չը գրուի :

Քանէի անգլիական զինուորական ատենը, արդէն գլխատուած եօթ դատապարտեալներէն զատ, ուրիշ 23 իսլամներ մահուան դատապարտած է :

Պոլսոյ մէջ, ի յիշատակ Վիլհէլմի այցելութեան, նոր աղբիւր մը պիտի շինուի, որուն յատակագիծը յօրինած է նոյն իսկ կայսրը :

Շէրպուրէ հոկտ. 23 թուականով քաջուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ֆրանսայի ծովային նախարարին հրամանով բազմաթիւ ծովային զինուորներ Շէրպուր հասեր են :

Ֆրանսայի նաւային պատրաստութիւնները Թուրքի մէջ թէեւ

կը հերքուին, բայց շարժումը ակնհայտ կերեւայ, ինչպէս նաեւ Պրէսթի մէջ :

Ստեպան 6 վաշտ հետեւակ զօրքեր և հրետանիներու զօրաբաժին մը ճամբայ ելեր են Կրէտէ երթալու համար :

Վիլհէլմ կայսրը Երլորդի պալատին մէջ մասնաւոր մեծաբանք ցուցուցեր է ուս դեսպան Պ. Չինովիէզի, և ամենուն ներկայութեանը ինքնագիր նամակ մը յանձնեց է անոր, Չարին ուղղեալ :

Եգիպտոսէն կը գրեն թէ Սուտանէ վերադարձող անգլիական զինուորներու մէջ ժամատանը ծագած է : Անգլիական իշխանութիւնները շատ հոգ կընեն այս համաճարակին համար, որ առաջ եկած է զլիաւորապէս Օմստուրմանի չափազանց ազտիզութիւններէն :

Կրուի թէ Չօլա գաղտնի կերպով Բարիզ մտեր է ուր կը շրջի այս պահուս ծպտեալ կերպով :

Բարիզի հաշտութեան յանձնաժողովին ամբերկացի սեղամները յանուն Պ. Մաք Գինլիի վերջնագիր մը տուին սպանիացի անգամներուն, թէ Մ. Նահանգները երբեք չպիտի ընդունին մասնակցիլ Քուպայի և Փիլիպպիններուն նկատմամբ սպանիական պարտքերուն և թէ Սպանիա վերջ տալու է իր ձգտումներուն :

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ

Պ. Ֆէլիքս Թոն՝ Պ. Շառլ Տիւրիէ խնդրեր է կազմիլ նոր նախարարութիւն մը, որ պիտի բաղկանայ եզեր սա անձերէն. Տէլքառէ՝ արտաքին գործոց, Ֆրէսիէ՝ պատերազմական, Ռիպօ՝ ելմտական, Պուստու՝ կըրթական, Գոնսթան՝ դատական. Պ. Լէկի անունն ալ կը յիշուի ինչպէս կերեւայ, այս անձերուն մեծ մասը նախկին նախարարապետներ են :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ռ. Շուսլա. — Կը հարցնէք թէ ինչո՞ւ համար Վիլհէլմ կայսրը մեր պատրիարքին հետ չէ տեսակցած : Իրաւունքին հարցուցէք որ թէեւ «զորոցներէ զուշացող է» բայց այս կարգի օգային լուրեր տարածելէ չզգուշանար :

Ով որ գիտէ Թաթէս Տոստուրեանի (Սերասիոյ Եարասար դիւղէն 30 տարեկան) ուր գտնուիլը, թող փութայ իմացնել իմբագրութեանս :

Նոյն խնդրանքը նաեւ անոնց որ սեղեկութիւն ունին քարակոփ (ժաշի) կապիւղի Թովաննէս Ռափայէկանի վրայ :

Ս. Մ. Բէսուսէնէ. — Չեր բաժնեգիրը ուղղակի իմբագրութեան հասցէին զրկեցէք :

Տ. Ք. Նիւ-Եօրք. — Չեր զրկած զրամը չենք ստացած :

Ս. Գ. Լոսանս. — Նոյնպէս :



ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ ԵՒՔՕԼԱ ԳՐԱԼԷՎ—ՎԱՌՆԱ

Գլխաւոր գործակալ Սօֆիա Բարսի կառավարութեան կողմէն երաշխաւորուած վիճակահանութեան

Պատիւ ունի ծանուցանել Վառնա եւ շրջակայից արդոյ հասարակութեան թէ արդէն ի վաճառ հանած է սոյն վիճակահանութեան տոմսերը, իրենց բախը փորձել ուղղակի կը հրաւիրուին զիմել վերոյիշեալ գրասենեակը այդ տոմսերէն զնելու համար : Փոփոզողներու ձրիարար կը զրկուի վիճակահանութեան յայտագիրը եւ ամէն յարակից տեղեկութիւններ :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԱՐԺՈՒՄԻ

Կը սպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութիւն, հարսանեկան հրատարակիչ, մահադէ, ինչպէս նաեւ պրօշուրներ :

Պիներն յոյժ դիւրամատչելի Ռերիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին :

ՎԱՐՊՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅՆՂԱՓՈՒՍԱՅՆ ԿԵԱՆՔԻՃ)

—(—

)(Գին 1 Ֆրանք)(

Մնացած սակաւաթիւ օրինակներ կը ծախուին Վառնայի մէջ Եարմով խմբագրատունը, Ֆիլիպպէ Տ. Անան Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալի-Կանի սրճարանը, Սօֆիա՝ Տ. Մուրի Արժուրիի քով :

Մտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Ռոնուլթեան գրահեր» :

ՊՕՐՍԱ

Վառնա 16 Հոկտեմբեր

ՊՈՒՂՏԱՅ

Վակօն, լիպրա 55—58, հէքթօր 9.50—11 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօր 10—13 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 հէքթօր 5.80—6.20 ֆրանք

ԵՈՒՂԱՅ

Կիւնտէ 20—25 արապա կէլմէքտէ տիր 5.40—5.70 ֆրանք

ՏԱՐԸ

Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տիր 58—60 լիպրա, 4.60—5 ֆրանք

ՖԱՍՈՒԼԵՍ

Կիւնտէ 70—80 արապա կէլմէքտէ տիր 100 օգգանը 18—22 ֆր. մալա կէլմէքտէ տիր
Առապա մուամէլէսի նարոլոն
Ֆրանք հիսապը իլէ տիր
Կիւնտէ 25—30 վակօն, 150—200 արապա պուղտայ, 70—80 արապա արբա կէլմէքտէ տիր :

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալա, թահալիլ Կեօղիլէօյլու քեանի խանութը, եւ Ապալիւրբանման մղկիթին զէմը հայկական գրատունը : Ա. Չարպահանկեանի քով :